

**КУЛЬТУРА И РЕЛИГИЯ**

**Ատրպատականի հայոց թեմում կրթական գործի բարեկարգումը  
և Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը**

**Ասատրյան Անահիտ Ս.**

*Ավագ մասնագետ, ՀՀ Միջուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0001-9630-1200>

[anul.asatryan.93@gmail.com](mailto:anul.asatryan.93@gmail.com)

**ՀՏԳ՝** 271.72-9:37(479.25)(091); **EDN:** NEENKD

**DOI:** 10.58587/18292437-2026.1-121

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** Կարապետ եպ. Տեր-Մկրտչյան, Ատրպատական, Թավրիզ, կրթական գործ, կրթական գործի բարեկարգում, Կենտրոնական դպրոց, թեմական խորհուրդ, միսիոներական դպրոցներ, Սալմաստ

**Реформирование образовательного дела в Армянской епархии Атрпатакана и епископ  
Карапет Тер-Мкртчян**

**Асатрян Анаит С.**

*Старший специалист,*

*Офис Главного уполномоченного по делам диаспоры Республики Армения (Ереван, РА)*

**Аннотация.** В период своего предстоятельства в Армянской епархии Атрпатакана (1907–1912 гг.) епископ Карапет Тер-Мкртчян, несмотря на неблагоприятные политические и экономические условия в Персии, предпринимал практические шаги, направленные на упорядочение и развитие образовательного дела в епархии. В мусульманской Персии законным представителем христианского армянского населения перед провинциальными властями и персидским правительством считался предстоятель Армянской епархии.

Учитывая многогранную деятельность епископа Тер-Мкртчяна в период его предстоятельства, в настоящей статье на основе всестороннего анализа архивных документов, публикаций периодической печати рассматриваемого времени и имеющейся научной литературы представлены его инициативы по основанию Центральной школы в епархиальном центре – городе Тавризе, а также меры, предпринятые им для создания епархиального архива, регламентации деятельности епархиального совета, а также для изучения современного состояния образовательного дела в отдалённых районах Атрпатакана и его дальнейшего совершенствования.

**Ключевые слова и словосочетания:** епископ Карапет Тер-Мкртчян; Атрпатакан; Тавриз; образовательное дело; реформирование образования; Центральная школа; епархиальный совет; миссионерские школы; Салмаст

**The Reform of Educational Activity in the Armenian Diocese of Atrpatakan and Bishop  
Karapet Ter-Mkrтчian**

**Asatryan Anahit S.**

*Senior Specialist,*

*Office of the High Commissioner for Diaspora Affairs of the Republic of Armenia (Yerevan, RA)*

**Abstract.** During his tenure as Primate of the Armenian Diocese of Atrpatakan (1907–1912), Bishop Karapet Ter-Mkrтчian undertook practical measures aimed at the regulation and development of educational activity within the diocese, despite the unfavorable political and economic conditions prevailing in Persia. In Muslim Persia, the lawful representative of the Christian Armenian population before the provincial authorities and the Persian government was regarded as the diocesan primate of the Armenian Church.

Taking into account the multifaceted nature of Bishop Ter-Mkrтчian’s activity during his primacy, this article, based on a comprehensive examination of archival documents, contemporary press publications, and relevant scholarship, presents his initiatives in founding the Central School in the diocesan seat of Tabriz. In addition, the measures were discussed, which he implemented to establish a diocesan archive, regulate the work of the diocesan council, and assess and improve the state of education in the remote districts of Atrpatakan.

**Keywords and phrases:** Bishop Karapet Ter-Mkrтчian; Atrpatakan; Tabriz; educational activity; educational reform; Central School; diocesan council; missionary schools; Salmast

**Մուտք**

1907 թ. նոյեմբերի 13-ին նշանակվելով Ատրպատականի թեմակալի պաշտոնում՝ Մայր Աթոռի միաբան Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանը մեկնում է Թավրիզ՝ կիսատ թողնելով արդեն իսկ սկսած գիտական-հրատարակչական գործունեությունը (1907 թ. ուսումնական տարվա սկզբին Կ. վրդ. Տեր-

պետ Տեր-Մկրտչյանը մեկնում է Թավրիզ՝ կիսատ թողնելով արդեն իսկ սկսած գիտական-հրատարակչական գործունեությունը (1907 թ. ուսումնական տարվա սկզբին Կ. վրդ. Տեր-

Մկրտչյանը Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Մինաս Բերբերյանի հորդորով սկսում է հավաքագրել Հայ Եկեղեցու պատմության վերաբերյալ իր դասախոսությունների ձեռագիր տետրերը և խմբավորելով ստանալ մեկ ընդհանուր դասագիրք Ճեմարանում և այլ ուսումնական հաստատություններում կիրառելու նպատակով) [5]: Ժամանելով Թավրիզ՝ նորընտիր թեմակալը, արժանանալով շատ ջերմ ընդունելության, իր առաջին քարոզում ներկայացնում է իր առաջնորդության հիմքը՝ «... ազգային, հաւատ (առանց նախապաշարումների) և կրթային» [7, 1907, № 185, էջ 3]:

### **Առաջնորդանիստ Թավրիզ քաղաքի կրթական վիճակը**

Թավրիզում պատգամավորական ժողովի և թեմական խորհրդի համար դեռևս 19-րդ դարավերջից առկա էր մնացել Ատրպատականի հայոց Կենտրոնական դպրոցի հիմնադրման գործը [6, էջեր 369-370]: Կենտրոնական դպրոց հիմնելու աշխատանքները գործնական փուլ էին տեղափոխվել դեռևս Ատրպատականի նախկին թեմակալ Եղիշե վրդ. Մուրադյանի օրոք, սակայն մնացել էին անավարտ: Բնականաբար Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանի թեմակալ առաջնորդությունը ստանձնելուց հետո պատգամավորական ժողովը հարցը կրկին դնում է քննարկման և սկսում գործուն քայլեր իրականացնել ինչպես դպրոցի շենքի վերաբերյալ հարցերի կարգավորման, այնպես էլ առհասարակ դպրոցի կայացման գործում [7, 1908, № 82, էջ 4]: Թավրիզի հասարակությունն ինքն էլ վկայում է, որ Ատրպատականում Կենտրոնական դպրոցը դարձել էր «... թեմիս առաջնորդ Կարապետ վարդապետի գործունակ և հոգացողության առարկան...» [7, 1908, № 87, էջ 4; 6, էջ 355; 8; 4, էջ 17]:

Ատրպատականի թեմի առաջնորդանիստ Թավրիզ քաղաքի 2 թաղերում քննարկվող ժամանակաշրջանում գործում էին 2 առանձին թաղական դպրոցներ՝ բոլորովին տարբեր կրթական ծրագրերով: Թեմի պատգամավորական խորհուրդը համարում էր, որ, չունենալով ընդհանուր վերահսկողություն սույն դպրոցների նկատմամբ, վերջիններս, անջատ գործելով, հայ հասարակությանն ավելի մեծ ֆինանսական բեռ էին պատճառում և տալիս շատ ավելի ցածր մակարդակի, թերուսությունից քիչ տարբերվող կրթական որակ: Թավրիզում գտնում էին, որ Կենտրոնական դպրոցի հիմնադրման գաղափարը ոչ միայն կմիավորեր քաղաքի հայաբնակ թաղերը, այլև կապահովեր ընդհանրական կրթական հաստատության գոյությունը՝ հստակ և միասնական կրթական ծրագրով [7, 1907, № 185, էջ 3]:

«Մշակ»-ի միջոցով դիմելով Պարսկաստանից դուրս բնակվող պարսկահայերին՝

Թավրիզից կոչ էին անում նյութական օժանդակությամբ նպաստել Թավրիզում կրթական գործի կարգավորմանը, չմոռանալ բնօրրանի կարիքների մասին, քանի որ «Ամենայնսրմար ժամանակն է այս մասին լուրջ մտածելու, նամանաւանդ որ մեր ներկայ թեմակալը այդպիսի մի կրթական գործի ձեռնարկութեան ամենալուրջ ձեռնհասութիւն ունի» [7, 1907, № 185, էջ 3; 7, 1908, № 94, էջ 4; 7, 1908, № 105, էջ 4]: Իսկ Կենտրոնական դպրոցի հիմնումը բարդ լուծելի հարցերի թնջուկ էր:

### **Թավրիզի Կենտրոնական դպրոցի հիմնադրմանն ուղղված ջանքերը**

Դեռևս 1902 թ. Ատրպատականի նախկին թեմակալ Եղիշե վրդ. Մուրադյանը Բաքվում գնում է Ղազար Հակոբյանի Թավրիզում գտնվող տունը, որն ունենալով հարմար տեղակայում՝ նպատակահարմար էր դպրոցի շենքի համար: Նախկին թեմակալը, հստակ գին պայմանավորվելով շենքի գնման համար, գումարի մի մասը հանձնում է «Թումանյան եղբայրներ» առևտրական տանը և խոստանում Թավրիզ վերադառնալուց հետո շատ սեղմ ժամկետներում ողջ գումարի հարցը կարգավորել ու արագ կազմակերպել շենքի գնման գործընթացը: Սակայն Թավրիզ ժամանելուց անմիջապես հետ թեմակալը կանչվում է Մայր Աթոռ և Ատրպատականի Կենտրոնական դպրոցի շենքի գնման հարցը մնում է առկա: Եվ արդեն թեմակալ առաջնորդ Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանի օրոք բանակցություններ են սկսվում շենքի սեփականատեր Ղազար Հակոբյանի, «Թումանյան եղբայրներ» առևտրական տան հետ՝ այդ անլուծելի թվացող հարցին լուծում տալու համար [7, 1908, № 94, էջ 4]: «Մշակ»-ի 1908 թ. մայիսի 11-ի № 102-ում կարդում ենք, որ Կենտրոնական դպրոցի շենքը արդեն գնվել է [7, 1908, № 102, էջ 1]: Իսկ դպրոցի շենքային հարցերի լուծմանը անմիջապես հաջորդելու էր դպրոցի բացման խնդիրը: Քանի որ Թավրիզում միայն տեղական միջոցներով, երկրամասում տիրող ֆինանսական անկայուն վիճակով պայմանավորված, անհնար կլիներ դպրոցի հիմնումն ու հետագա պահպանությունը, որոշվում է պատգամավորական ժողովի կողմից նշանակել հանգանակիչ հանձնախմբի անդամներ, ովքեր թեմակալ առաջնորդի հետ պետք է այցելեին ռուսահայ բարերարներին և փորձեին այդպիսով լուծել անհրաժեշտ գումարի հավաքագրման խնդիրը [7, 1908, № 105, էջ 4; 7, 1908, № 126, էջ 4]: Այնուհետև թեմական խորհրդի ընտրությամբ ձևավորվում է 7 հոգուց բաղկացած հանձնախումբ, որը պետք է գտներ սղոյուններ Ատրպատականի Կենտրոնական դպրոցի գոյության համար, իրականացներ հանգանակություններ Թավրիզում և առհասարակ ողջ Ատրպատականում ու այլ հայաբնակ

բնակավայրերում և, ամեն ջանք գործադրել, որ Կենտրոնական դպրոցը բացել իր դռները արդեն նոր ուսումնական տարում [7, 1909, № 18, էջ 4]: Սակայն Ատրպատականի ներքին անկայուն իրավիճակը, Թավրիզի չորսամյա պաշարումը [2, վավ. 220], սովն ու հացի բացակայությունը [2, վավ. 220, թթ. 1-2] չէին կարող իրենց բացասական հետևանքները չունենալ: Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանը «Մշակ»-ում տպագրված հոդվածում, անդրադառնալով Թավրիզում հիմնադրվող Կենտրոնական դպրոցին, նշում է, որ Կենտրոնական դպրոցը պետք է լինի Թեմական դպրոց և «Եթե մինչև այժմ այդ անունը տալուց խուսափել են, պատճառը եղել է անշուշտ կասկածը, թե մի գուցե դրա եկեղեցական ծագման շնորհիվ ստուեր ընկնի ապագայ մեծ կրթական հիմնարկության վրա և մարդիկ մտածեն, թե ... այնպիսի դպրոց են ուզում բանալ, ուր «գիտութեան լուսոյ» փոխարեն «կրօնական ոգու մռայլը» պետք է իշխէ» [7, 1909, № 19, էջ 4]: Թեմակալ առաջնորդը նշում է, որ դպրոցի անվան ընտրությունը չի կարող դպրոցում ավանդվող դասավանդության որակի և ազատամտության վրա որևէ անդրադարձ ունենալ [7, 1909, № 19, էջ 4], ընդհակառակը, վերջինիս խոսքով «Պարսկահայերը գոնե առ այժմ չեն կարող ուրիշ կազմակերպված միություն ունենալ, բայց եթե եկեղեցականը...» [7, 1909, № 19, էջ 4]: Վերջում Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանը հույս է հայտնում, որ երկրի քաղաքական անբարենպաստ պայմաններում իրենց ցանկությունն է առաջիկա նոր ուսումնական տարվանից Թավրիզի 2 թաղերի դպրոցների Դ (4-րդ) դասարանները վերցնելով բաց անել թեմական (Կենտրոնական) դպրոցը՝ Դ (4-րդ) և Ե (5-րդ) դասարաններով [7, 1909, № 19, էջ 4]: Իսկ հավանական նորանոր օժանդակությունների առկայությունը միայն կնպաստեր Թեմական դպրոցի դասարանների ցանկի ընդլայնմանը: Արդեն 1909 թ. հունիսին, չնայած ողջ Պարսկաստանում պահպանվող լարված դրությանը, թեմակալ Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ Կենտրոնական դպրոցի հոգաբարձուների խորհուրդը վերսկսում է իր աշխատանքը, փորձում ավելի մեծ ակտիվությամբ իրականացնել հանգանակության գործը [7, 1909, №141, էջ 3] և դպրոցը բացել նոր ուսումնական տարվա սկզբին: «Մշակ»-ի 1909 թ. 170-րդ համարում տպագրված հայտարարությունից տեղեկանում ենք, որ նախատեսվում է նոր ուսումնական տարվանից բացել Կենտրոնական դպրոցը երրորդ և չորրորդ երկսեռ դասարաններով՝ մոտավորապես Գևորգյան հոգևոր ճեմարանի և թեմական դպրոցների կրթական ծրագրերով [7, 1909, №170, էջ 4]: «Մշակ»-ում տեսնում ենք

նաև դպրոցում տեսուչի և ուսուցիչների թափուր հաստիքների համալրման նպատակով տպագրված աշխատանքի հայտարարությունը [7, 1909, №170, էջ 4]: Սակայն, թեմակալ առաջնորդի հորդոր նամակները [3, վավ. 71; 9, էջ 239-240]՝ հանգանակություններով մասնակցել Թավրիզի Կենտրոնական դպրոցի կայացման գործին և ժամանակի հայ մամուլում Ատրպատականից դուրս բնակվող պարսկահայերին արված դիմումները միշտ չէ, որ պսակվում էին հաջողությամբ: Դրամական միջոցների սղությունից և ծանր տնտեսական դրությունից զատ կային նաև դեպքեր, երբ, հանգանակությանը մասնակցելու թեմակալ առաջնորդի հորդորական նամակին ի պատասխան հրաժարվում էին՝ պատճառաբանելով Թավրիզի դպրոցի երկսեռ բնույթը [3, վավ. 174]: Սակայն եղել են նաև դեպքեր, երբ Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանի քայլերը պսակվել են հաջողությամբ [3, վավ. 49; 9, էջ 159-160]:



Արդյունքում, Ատրպատականի թեմակալ Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանը, դիմելով կայծողիկոսական տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցին, խնդրում է իրեն տրամադրել անցագիր Թիֆլիս և Բաքու գնալու և տեղում պարսկահայերի ու այլ կարող ուժերի հետ հանդիպելու համար՝ ի շահ Ատրպատականի եկեղեցական և կրթական հաստատությունների ֆինանսական խնդիրների լուծման [1, ց. 5, գ. 10, թ.36; 9, էջ 140-141]: Օգտագործելով

ստեղծված հնարավորությունը՝ թեմակալ առաջնորդ Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանը Թիֆլիսում Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովին ներկայանալու ընթացքում ի թիվս այլ հարցերի բարձրացնում է նաև Թավրիզի հայոց դպրոցներին դեռևս նախկին փոխարքա մեծ իշխան Միխայիլ Նիկոլանիչի օրոք տրված նպաստի վերականգնման հարցը, որը դադարեցվել էր Գոլիցինի օրոք: Փոխարքան լսելով թեմակալ առաջնորդի խնդրանքը՝ խոստանում է միջնորդել նպաստի վերականգնման համար [7, 1908, № 280, էջ 3]: Ավելի ուշ՝ արդեն 1911 թ. Թավրիզի թաղական դպրոցներին նպաստի տրամադրումը վերականգնվում է [7, 1911, №118, էջ 2]: Իսկ ահա Բաքվում կատարած իր քայլերի, ստացած հանգանակությունների, կազմակերպված հանդիպումների և ի օժանդակություն Ատրպատականի հայերի իրականացված միջնորդությունների մասին Կարապետ ծայրագույն վարդապետ Տեր-Մկրտչյանը ներկայացնում է «Մշակ»-ին ուղղված իր նամակում՝ հույս հայտնելով, որ Թիֆլիսում և Բաքվում հանուն Ատրպատականի հայության իրականացվող դրամահավաքները կլինեն շարունակական [7, 1908, № 281, էջ 4]: Նամակից տեղեկանում ենք, որ Բաքվի հայությանը ևս ներկայացվել է այդ «հաշվետվությունը» «Բաքվի ձայնը» թերթի 35-րդ համարում: Կ. եպս. Տեր-Մկրտչյանի անձնական արխիվում պահվող ավելի ուշ շրջանի նամակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերոհիշյալ այցելություններն ու հանդիպումները դիտարկվում են որպես արդյունավետության նվազ ցուցիչ ունեցող քայլեր [3, վավ. 55; 9, էջ 169-170]:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի թեմակալության շրջանում փորձ է արվել հարստացնել Ատրպատականի աշակերտության շրջանում կիրառվող դասագրքերի պաշարը [3, վավ. 39; 9, էջ 146-147]:

**Կենտրոնական դպրոցի բացումն ու թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի մասնակցությունը կրթական գործընթացին**

Չնայած երկրում տիրող ներքին անկայունությանը, տնտեսական ծանր իրավիճակին և Թավրիզի ռազմական գործողությունների մեջ ներքաշվելուն՝ երկարատև պայքարի արդյունքում և հատկապես Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի անմիջական ջանքերի շնորհիվ 1909-1910 թթ. ուսումնական տարում՝ 1909 թ. հոկտեմբերից իր աշխատանքներն է սկսում Թավրիզի Կենտրոնական դպրոցը՝ 65-70 երկսեռ աշակերտներով՝ բաղկացած 2 դասարաններից՝

3-րդ և 4-րդ [3, վավ. 39; 9, էջ 146-147; 6, էջ 364-366, 369]:

Իսկ 1911-1912 թթ. ուստարում Կենտրոնական դպրոցն արդեն ունեցել է 6-րդ դասարան՝ ընդամենը 12 աշակերտներով՝ 4 աղջիկ և 8 տղա [7, 1912, №104, էջ 2]: Այս համատեքստում հիշատակության է արժանի նաև այն փաստը, որ թեմակալ առաջնորդի գլխավորությամբ դեռևս տարիներ առաջ բարձրացված Թավրիզի 2 թաղերի դպրոցների 2 տարբեր կրթական ծրագրերը համատեղելու և 1 միասնական կրթական ծրագրով առաջնորդվելու հարցը կրկին վեր է հանվում և Կենտրոնական դպրոցի աշխատանքների մեկնարկից հետո սկսվում են ակտիվ քննարկումները Թավրիզում գործող արդեն թվով 3 դպրոցների մասնավարժական խմբերի միջև [7, 1912, №104, էջ 2; 4, էջ 18]: Հանուն արդարության պետք է նշել, որ Թավրիզում հասարակությունն ամբողջովին անհաղորդ չէր Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի թեմակալության շրջանում իրականացվող կրթական գործի բարեկարգմանը: Կային անհատներ, ովքեր, տեսնում և խոստովանում էին Ատրպատականում հայ հասարակության կրթության բացը, ընդունում էին այս հարցում շրջադարձային քայլերի անհրաժեշտությունն ու հենց շարքային հայի այս գործընթացին մասնակցության կարևորությունը [7, 1910, №43, էջ 3-4]: Բայց և կային առևտրականներ, առևտրական տների ներկայացուցիչներ, ովքեր պատրաստ էին հանուն սեփական շահերի խլել Ատրպատականի թեմին հանգանակված գումարը և շատ անտարբեր էին ազգային կարիքների նկատմամբ [7, 1910, №74, էջ 3-4]:

Հավանաբար, այս և շատ այլ կարևոր հարցերին կրթության, գիտելիքի միջոցով լուծում տալու նպատակով էլ թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը հանդես է գալիս հայտարարություններով և հայ հասարակությանը հրավիրում է լսելու «այժմեական ու շահաւէտ դասախօսություններ» [7, 1910, №52, էջ 4]: Բայց Թավրիզի հայ հասարակությունն անտեսում է թեմակալ առաջնորդի առաջարկը. «գիտություն ու դաստիարակության խօսքին անզգայ հասարակությունը արձագանք չը տուեց. և, բնական է, դասախօսությունները տեղի չունեցան» [7, 1910, №52, էջ 4]:

Սակայն ժամանակի մամուլի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս փաստել, որ չնայած Թավրիզի հայ հասարակության ցուցաբերած ընդհանուր անտարբերությանը կրթության և առհասարակ ազգային գործերի բարեկարգմանը՝ թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը չի ընկրկում և ընդունելով Կենտրոնական դպրոցի հոգաբարձության առաջարկը՝ ստանձնում է դպրոցում Քրիստոնեության պատմություն առարկայի դասավան-

դուրը դպրոցի 4-րդ և 5-րդ դասարանների համար: Դպրոցի հոգաբարձությունն էլ տեսնում էր, որ կա այդ առարկայի բացը կրթական ծրագրում, իսկ նախկինում արդեն իսկ դասավանդման առաջարկ ստացած ուսուցիչները հրաժարվել էին՝ առաջին պլան բերելով իրենց անհամապատասխանությունն այդ առարկան դասավանդելուն և առաջարկել թեմակալ առաջնորդի թեկնածությունը [7, 1911, №54, էջ 3-4]: Թեմակալ առաջնորդը ազատ դասախոսություններ կարդալու միջոցով, որպես ուսուցիչ, իր մասնակցությունն է բերում Թավրիզի Կենտրոնական դպրոցի աշխատանքներին: Այս առնչությամբ «Մշակ»-ին Թավրիզից գրում են. «*Վերջապես ուրախալի է, որ Կարապետ եպիսկոպոս գալիս է լրացնելու Կենտրոնական ուսումնարանի կարևոր մի պակասը*» [7, 1911, №54, էջ 3-4]: Իսկ արդեն 1911 թ. հոկտեմբերի 9-ին Կենտրոնական դպրոցի վարչությունը թեմակալ առաջնորդի գլխավորությամբ Թավրիզի հանրությանն է ներկայացնում դպրոցի անցած 3 տարիների աշխատանքի «հաշվետվություն»-ը: Թեմակալ առաջնորդը ևս մեկ անգամ ներկայացնում է դպրոցի կարևորությունն ու դրա հետագա զոյության հրամայականը: Հետաքրքիր է այս առնչությամբ մեջբերել «Մշակ»-ի թղթակցի ներքոհիշյալ մտքերը, որոնք ևս մեկ անգամ ամբողջացնում են քննարկվող ժամանակաշրջանի Թավրիզի հայ հասարակության դեպի ազգային գործերն ունեցած անտարբերության ողջ ներկայակար. «*Թավրիզի անհետաքրքիր հայ հասարակությունը մի աւելորդ անգամ ևս ցոյց տուեց, թէ ինչ հայեացքներով է օրորվում և ինչչափ է ընթանում իր գաւակների կրթութեան գործը*» [7, 1911, №54, էջ 3-4], «*Անտարբեր հասարակութեան բացակայութիւնից արդարապէս վրդովված արքայազանը հանդէս բերեց Պարսկաստանի նման մի երկրում կրթական հաստատութիւնների բարձր նշանակութիւնը*» [7, 1911, №54, էջ 3-4], «*Թէ ինչ ազդեցութիւն կանի արքայազանի թափած մարգարիտները մեր հասարակութեան գլխին, որ շատ է սիրում այսպիսի օրերում բացակայել, դրական ոչինչ ասել չենք կարող*» [7, 1911, №54, էջ 3-4]: Մեզ համար այս համատեքստում հետաքրքրական է այն հանգամանքը, որ 1911 թ. ընթացքում Թավրիզի Կենտրոնական դպրոցն ունեցել է 3 դասարան՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ՝ 68 աշակերտներով՝ 23 աղջիկ և 45 տղա: Աշակերտներին դասավանդել են հայերեն, պարսկերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներ: Թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանն ազատ դասախոսություններ է ընթերցել 4-րդ և 5-րդ դասարաններում՝ Քրիստոսի կյանքի և վարդապետությունների վերաբերյալ: Եվ որ հետաքրքիր է, դպրոցի ներկայացրած տեղեկագրից պարզ է դառնում, որ աշակերտները, ովքեր գալիս են

Թավրիզի 2 թաղերի ծխական դպրոցներից, Կենտրոնական դպրոցում ուսանելիս ունեն այնպիսի դժվարություններ, որոնք սովորաբար չպետք է ունենան տարրական դասարաններ ավարտած աշակերտները [7, 1911, №54, էջ 3-4]: Մա ևս մեկ անգամ գալիս էր փաստելու, որ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի ձեռնարկած Թավրիզի 3 ուսումնական կենտրոնների համար միասնական կրթական ծրագիր ձևավորելը ժամանակի հրամայականն էր:

**Կրթական գործը Ատրպատականի գավառներում**

Ընդհանրապես թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի Ատրպատականի թեմում կրթական գործունեության, վերջինիս կողմից ոլորտի բարեկարգմանը ուղղված միջոցների ներկայացման տեսակետից շատ կարևոր է «Մշակ» պարբերականում թեմակալի «Կրթական գործը Ատրպատականում» վերտառությամբ 8 մասից բաղկացած հոդվածաշարի ուսումնասիրությունը: Առանձին հոդվածներով անդրադառնալով Թավրիզում [7, 1911, №111, էջ 1-2], Սալմաստում [7, 1911, №129, էջ 2], Ուրմիայում [7, 1911, №135, էջ 2-3], Մարաղա-Միանդաբ-Սուլդուզում [7, 1911, №142, էջ 2-3], Խոյ-Մակուում [7, 1911, №146, էջ 2] և Ղարադաղում [7, 1911, № 155, էջ 1-2] կրթական գործի կազմակերպմանն ու ողջ Ատրպատականում առկա իրադրությանը՝ թեմակալը մատնանշում է ապագայի անելիքները: Ի սկզբանե կարևորելով Ատրպատականում հայ բնակչության շրջանում կրթվածության մակարդակի բարձրացումը՝ այդ ուղղությամբ իրականացվելիք տարատեսակ միջոցառումները, թեմակալ առաջնորդը շեշտադրում է կրթական գործի բարելավման համար խիստ անհրաժեշտ հանգանակությունների և նվիրատվությունների էական ավելացումը, քանի որ Ատրպատականի թեմի աղքատ բյուջեի տեսանկյունից նմանատիպ ծախս իրականացնելն անհնար կլիներ: Հետևաբար մնում էր արտերկրում բնակվող պարսկահայերի և տեղում բնակվող քիչ թե շատ դրամական հնարավորություններ ունեցող հայերի կողմից մշտական նվիրատվությունների կազմակերպումը: Ավելին՝ թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանն այս առնչությամբ գրում է. «*Այնուամենայնիւ, եթէ այն բոլոր դրամը, որ ծախսվում է թաւրիզեցի և սարմաստեցի ունեւորների որդոց՝ Թիֆլիսում և ուրիշ տեղեր ուսում տալու համար, տեղումը մնար, կարելի էր թէ Կենտրոնականը և թէ միւս դպրոցները շատ բարեկարգ վիճակի մէջ պահել: Բայց ինչպէ՞ս անենք, որ թաւրիզեցիկ և սարմաստեցիք համոզվեն, թէ իրանց գաւակները նոյնչափ լաւ ուսում կարող են ստանալ այստեղ...»*» [7, 1911, №111, էջ 2]: Միաժամանակ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը շոշափում է նաև

այն հարցը, թե ինչու՞ է վերջին շրջանում Ատրպատականի հայությունն անտեսվում հայ բարեգործների կողմից՝ ելնելով վերջին շրջանում քանակապես ահռելի կտակներից և բարեգործություններից Ատրպատականին դուրս թողնելու հանգամանքից [7, 1911, №111, էջ 2]: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նախ և առաջ կրթական գործի բարելավման տեսանկյունից առաջնային էր վստահության վերականգնումը հասարակության շրջանում: Մարդիկ պետք է վստահեին Ատրպատականում գործող կրթական հաստատությանը և վերջինիս մատուցած կրթական ծառայությանը: Անդրադառնալով քննարկվող ժամանակաշրջանում Թավրիզի Կենտրոնական դպրոցի հիմնադրման փաստին՝ թեմակալը նշում է, որ 2 ուսումնական տարի Կենտրոնական դպրոցը կարողացել է գոյատևել հիմնականում Թավրիզում իրականացված հանգանակությունների շնորհիվ, բայց հետայսու նման պայմաններում դպրոցի ճակատագիրը վտանգված է [7, 1911, №111, էջ 1]:

### **Թավրիզ**

Թավրիզում հայ երեխաների տարատեսակ միսիոներական դպրոցներ հանախելու վերաբերյալ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ այստեղ առաջին դրդիչը այդպիսի դպրոցներում օտար լեզուներից ֆրանսերենի և գերմաներենի բավականին բարձրորակ ուսուցումն է, ինչպես նաև այդ դպրոցների անվճար լինելը [7, 1911, №118, էջ 2]: Ստացվում է, որ Թավրիզի Կենտրոնական դպրոցը և Լիլավա և Ղալա թաղամասերի ծխական դպրոցները պետք է կարողանային տվյալ ժամանակաշրջանում ապահովել մրցունակ կրթություն ստանալու հնարավորություն անվճար հիմունքներով հայ հասարակության համար, ինչն էլ կհանգեցներ նրան, որ հայ երեխաները չհանախելով միսիոներական դպրոցներ, չէին հեռանա նաև Հայ Առաքելական եկեղեցուց [3, վավ. 179, թթ. 8-9; 7, 1911, №118, էջ 2]: Բնականաբար մրցունակ կրթություն ապահովելու առաջին գրավականը հաստատուն ֆինանսական միջոցների և որակյալ ուսուցչական կազմի առկայությունն էր, ինչն էլ քննարկվող ժամանակաշրջանում հնարավոր կլիներ ապահովել բացառապես պարսկահայերի, ինչպես նաև արտաքին, շարունակական նվիրատվությունների և հանգանակությունների շնորհիվ: Հավելենք, որ իր թեմակալության շրջանում Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը դիմել է Պարսկաստանից դուրս բնակվող շատ հայերի՝ Թավրիզի Կենտրոնական դպրոցին գումար նվիրաբերելու խնդրանքով [3, վավ. 46; 9]: Թեմակալ առաջնորդն առանձին անդրադարձ կատարելով Թավրիզի 2 թաղական դպրոցներին՝ ընդգծում է վերջիններիս շատ անհրաժեշտ և կարևոր դերը Թավրիզում և, սրանով իսկ պայմանավորված, մատնանշում

վերջիններիս ժամանակի պահանջներին համապատասխան բարեկարգումն ու անպայմանորեն դպրոցներին ֆինանսական աջակցությունը [7, 1911, №118, էջ 2]:

### **Սալմաստ**

Անդրադառնալով Սալմաստի վիճակի 11 հայկական դպրոցներին՝ թեմակալը նշում է, որ վերջիններս ունեն բացառապես երկսեռ աշակերտություն: Խոսելով Սալմաստի շրջանի դպրոցներում կրթության որակի մասին՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է. «Չեմ կարծում, թե Կովկասում շատ տեղերի մեր ծխական դպրոցներն աւելի բարձր դրութեան վրա լինեն» [7, 1911, №129, էջ 2]: Թեմակալը մեծ գնահատանքի է արժանացնում դպրոցների ուսուցչական կազմում Գևորգյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի սաներից 2-ի ներգրավվածությունը, ինչպես նաև մնացյալ ուսուցիչների կողմից ձեռնհաս լինելը իրենց ստանձնած պաշտոններին [7, 1911, №129, էջ 2]: Սատնանշելով Սալմաստի վիճակում ծխական խորհուրդների բավական գովելի աշխատանքը՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ, օգտագործելով Սալմաստի առկա պոտենցիալն ու ներգրավելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, կարելի է Սալմաստի Հաֆթթուան գյուղի դպրոցի դասարանների քանակն ավելացնելով այն վերածել Կենտրոնական դպրոցի Սալմաստի վիճակի համար [7, 1911, №129, էջ 2; 1, ց. 2, գ. 1867, թթ. 12-13շրջ.: 9, էջ 174-175]: Հատկապես Սալմաստի վիճակի պարագայում թեմակալ առաջնորդը կարևորում է շերամապահության ուսուցումը, զարգացումն ու տարածումը գավառում, քանի որ վերջինիս տարածումը գավառում որպես գյուղատնտեսության մի ճյուղ կապահովեր տեղի բնակչությանը նաև անհրաժեշտ աշխատանքով և հետևաբար ֆինանսական միջոցներով [7, 1911, №129, էջ 2; 1, ց. 2, գ. 1867, թթ. 12-13շրջ.: 9, էջ 174-175]: Եվ առհասարակ կարևորելով գավառներում կրթության զարգացումն ու դրա հետ զուգահեռ գավառների կլիմայական և աշխարհագրական պայմաններից ելնելով գյուղատնտեսական որոշակի առարկաների, գիտությունների դասավանդումը՝ Ատրպատականի թեմակալ առաջնորդը նշում է. «Իրօք հարկատր էր, որ Ատրպատականի իրաքանչիւր վիճակում մի-մի կենտրոնական դպրոց լինէր՝ 3 դասարանով, ուր շարունակէին իրանց ուսումը վիճակի միւս դպրոցների կարող աշակերտները, և նրանց մեծ մասը գաւառի պահանջների համեմատ կրթութիւն ստանար, իսկ մի փոքր մասը աւարտելուց յետոյ կարողանար անմիջապէս թեմակալ-կենտրոնական դպրոց մտնել և այնտեղ շարունակել ուսումը» [7, 1911, №129, էջ 2; 1, ց. 2, գ. 1867, թթ. 12-13շրջ.: 9, էջ 174-175]: Թեմակալի բնորոշմամբ՝ Սալմաստում այս ծրագիրը հնարավոր կլիներ իրագործել, եթե

Մալմաստից օրեցօր ահագնացող հայերի արտագաղթը դադարեր, իսկ սալմաստեցի մեծահարուստները դրամական աջակցություն տրամադրեին սեփական բնօրրանում կրթական գործի զարգացմանը [7, 1911, №129, էջ 2; 1, գ. 2, գ. 1867, թթ. 12-13շրջ.: 9, էջ 174-175]:

### **Ուրմիա**

Ընդգծելով Ուրմիայի շրջանի աղքատ դրությանը՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ շրջանի հայաբնակ գյուղերի ծայրադրատությունն իր դրոշմն է թողել նաև կրթական գործի վրա և ըստ էության պետք չէ ավելին սպասել այն զավառից, որի հայաբնակ գյուղերում անգամ քահանա չկա, այլ Ուրմիայից տարին 1 կամ մի քանի անգամ քահանան գալիս է կոնկրետ գործողությունների, ծիսակատարությունների համար [7, 1911, №135, էջ 2]: Թեմակալ առաջնորդի բնորոշմամբ՝ Ուրմիայի շրջանի Բարանդուզի հովտի 12 գյուղերում բնակվող 200 տուն հայերը ամբողջությամբ թուրքախոս են: Թեմակալը նշում է, որ մինչև 1908 թ. Թավրիզի Հայուհեաց բարեգործական ընկերության միջոցներով Ուրմիայի Բարառու, Դիզաթաքե և Թոնաթար գյուղերում գործում էին դպրոցներ, ինչի շնորհիվ կային մեծաքանակ հայախոս և գրագետ երիտասարդներ: Սակայն Տ. Աֆրիկյանի ընկերության կողմից տարեկան 2000 թուման նպաստի տրամադրումը դադարեցնելուց հետո վերոհիշյալ դպրոցներն ու այդ նպաստով պահվող ևս 6 դպրոցներ Ուրմիայի շրջանում փակվեցին [7, 1911, №135, էջ 2]: Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի դիտարկմամբ Ուրմիայի շրջանի նյութական անապահով վիճակով և քաղաքական անկայունությամբ պայմանավորված՝ ազգային դպրոցների բացակայության պայմաններում ազգային կրթական գործի բարելավմանը էապես խոչընդոտում էին տարատեսակ միսիոներական շարժումները [7, 1911, №135, էջ 2; 1, գ. 2, գ. 1867, թթ. 16-19շրջ.: 9, էջ 178-179]: Այստեղ թեմակալ առաջնորդը ևս մեկ անգամ անդրադարձ է կատարում միսիոներական դպրոցներին: Եթե Թավրիզում հայ ազգաբնակչությունը, հանձին տեղում գործող 3 հայկական ուսումնական կենտրոնների, ուներ ընտրության հնարավորություն, ապա Ուրմիայի շրջանում իրավիճակն առավել քան անելանելի էր, քանի որ նյութական անապահովությունից ելնելով հայկական դպրոցները փակվում էին, իսկ հայ բնակչությունը երեխաներին ուղարկում էր տեղի միսիոներական դպրոցներ [7, 1911, №135, էջ 2-3] կամ երեխաները մեծանում էին անգրագիտության մեջ: Արդյունքում՝ Ուրմիայի շրջանում քաղաքական և տնտեսական աննպաստ պայմաններին զուգահեռ միսիոներական դպրոցների գոյությունը էապես խաթարում էր ազգային կրթության զարգացմանը: Ուրմիայում կրթական գործի բարելավման

ուղղությամբ թեմակալ առաջնորդն առաջին պլան է բերում կրթական գործին սրտացավ և եռանդուն, գիտակ մարդկանց գործունեությունը տեղում, ովքեր համոզելով, տարատեսակ միջոցներով անգամ ստիպելով պետք է ձևավորեին այնպիսի օրակարգ, որ տեղի հայ բնակչությունն ինքը մտածեր և սկսեր հոգ տանել իր զավակների կրթության մասին: Ապա այս գործընթացին տեսանելի շարժ ապահովելու համար վերջինս երկրորդում է նյութական օժանդակության և մշտական հանգանակությունների կամ նպաստների տրամադրումը դպրոցների պահպանման համար [7, 1911, №135, էջ 3]:

### **Մարաղա, Միանդաբի գավառակ, Սուլուզի շրջան**

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, անդրադառնալով Մարաղա քաղաքի, Միանդաբի գավառակի և Սուլուզի շրջանի հայաբնակ բնակավայրերում կրթության առկա վիճակին՝ ցավով նշում է, որ այստեղ իրավիճակն առավել քան օրհասական է: Բնակվելով թուրքախոս շրջաններում թուրքերի մեջ՝ տեղի հայ բնակչությունն առաջին հերթին թուրքախոս է, հետո ապրում է թուրքերին բնորոշ նիստ ու կացով և սովորություններով: Թեմակալի պնդմամբ, վերջին տասնամյակներին միայն Թավրիզի և այլ հայաբնակ շրջանների հետ առևտրաշրջանառության ընդլայնման, ինչպես նաև տեղի փոքրիկ հայկական դպրոցի գոյության շնորհիվ է, որ որոշակի հայկականություն է տարածվել վերոհիշյալ շրջաններում: Վկայակոչելով Մարաղայի հայերի շրջանում փոխադարձ անվստահությունն ու առևտրում անհասկանալի դաժան պայքարը՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը բնութագրում է շրջանում ազգային-հասարակական ձեռնարկների բացակայությունն ու նաև նոր սկսվող ձեռնարկների ձախողումները [7, 1911, №142, էջ 2]: Ինչպես Ուրմիայի շրջանի պարագայում, Միանդաբի գավառակում ևս տարիներ առաջ գործող դպրոցների ֆինանսական բեռը հոգացել է Թավրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերությունը [1, գ. 2, գ. 1867, թթ. 16-19շրջ.: 9, էջ 176-177]: Վերջինիս վերաբերյալ թեմակալ առաջնորդն արտահայտում է հետևյալ միտքը. «Դժբաղդաբար վերջին ժամանակ բոլորը կարծես երես են թեքել Թավրիզի Հայուհեաց Ընկերությանից, որ մի քանի տարի առաջ ընդարձակ և արդիւնաւոր գործունեութիւն ունէր, իսկ այժմ հազիւ նշմարելի գոյութիւն է պահում» [7, 1911, №142, էջ 3]: Անդրադառնալով վերոհիշյալ շրջաններում կրթական գործի լավարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների խնդրին՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է. «Ատրպատականի հայոց առաջնորդարանի տրամադրութեան ներքոյ ոչ մի կօպէլ չը կայ այսպիսի նպաստների

համար, և որ կողմը դիմում ենք՝ հանդիպում ենք միայն սառն անտարբերութեան» [9, 1911, №142, էջ 3]:

### **Խոյի վիճակ և Մակու**

Հիշատակելով Խոյի վիճակում և Մակու քաղաքում բնակվող փոքրաթիվ հայ բնակչությանը [1, ց. 2, գ. 1867, թթ. 12-13շրջ.; 9, էջ 174-175] թեմակալ առաջնորդը վերստին նշում է Պարսկաստանի, հատկապես Ատրպատականի ծայրագավառներում տիրող ամենաթողությունը, երկրամասի անկայուն իրավիճակը: Թեմակալի դիտարկմամբ Խոյի արհեստավոր հայ բնակչությունը արհեստակցական միություններ կազմելու և այդպիսով իրենց արհեստով գումար աշխատելու փոխարեն ընտրել է օղեվաճառությամբ գումար վաստակելու արատավոր ճանապարհը [7, 1911, №146, էջ 2]: Բացի այդ թեմակալ առաջնորդը նշում է, որ եթե Խոյի դպրոցն ունենար արհեստագիտական բաժին, որտեղ կկարողանային սովորեցնել նաև նոր արհեստներ և կատարելագործել արհեստավոր ժողովրդի ունեցած գիտելիքը, հնարավոր կլիներ Խոյի հայ բնակչության շրջանում ավելի մեծ հետաքրքրություն և պատասխանատվություն առաջացնել դեպի ազգային դպրոցը [7, 1911, №146, էջ 2]: Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ հույս ուներ Մ. Թադևի վանքի տնտեսական վիճակը հետզհետե կայունացնելով՝ ֆինանսական միջոցներով օգնել ոչ միայն վանքին կից գյուղի, այլ հարևան մյուս գյուղերի դպրոցների պահպանմանը: Մակայն վերջին շրջանի աղետալի դեպքերը հիշատակելով՝ թեմակալ առաջնորդը հույս է հայտնում գոնե եղածը պահպանել և իր թերություններով հանդերձ ընդհանրապես չկորցնել [7, 1911, №146, էջ 2]: Վերջինիս դիտարկմամբ՝ բոլոր հայաբնակ շրջաններում թե՛ կրթական և թե՛ ազգային-հասարակական գործերը բոլորովին այլ կերպարանք կունենային, եթե երկրում տիրեր խաղաղություն. հայ ազգաբնակչությունը ևս սեփական անվտանգության մասին մտածելու փոխարեն ժամանակ և հնարավորություններ կներդնէր կրթական գործի բարելավմանը [7, 1911, №146, էջ 2]:

### **Ղարաղաղ**

Խոսելով Ղարաղաղի հայության մասին՝ թեմակալ առաջնորդը, վկայակոչելով շրջանի փոքրաթիվ և ցրված հայության արիությունն ու ակնհայտ տարբերությունը մնացյալ շրջանների պարսկահայերից, նշում է, որ ցանկացած նյութական աջակցության պարագայում Ղարաղաղի 4 վիճակների 29 հայաբնակ գյուղերում հնարավոր է զարկ տալ կրթության գործին, եթե երկրամասում հաջողվի հաստատել խաղաղություն, իսկ երկրամասի կառավարումն իրականացվի հստակ գործող կանոններով և ոչ թե կամայական որոշումներով [7, 1911, № 155, էջ

2]: Կրթական գործին զուգահեռ Կ. եպս. Տեր-Մկրտչյանը նկատում է նաև վերոհիշյալ գավառների Հայ եկեղեցիների «մերկությունը» [7, 1911, №156, էջ 2]. եկեղեցիներն ու քահանաները շատ հաճախ զուրկ էին եկեղեցական կարգն իրականացնելու համար անհրաժեշտ ամենատարրական պարագաներից: Եվ բնական է, նման ամենաթողության և մշտական կողոպուտների ու թալանի մեջ Հայ եկեղեցին իր գույքով հարուստ ավար կարող էր հանդիսանալ, իսկ որոշ տեղերում արդեն իսկ ենթարկվել էր ավարառության: Թեմակալ առաջնորդի բնորոշմամբ. «Ղարաղաղի 29 հայաբնակ գիւղերից միայն Խանազեհ գիւղի եկեղեցին Ճաշոց գիրք ունի. միւսներից շատերը չունեն նաև ո՛չ զգեստ, ո՛չ ամտենի ժամագիրք, ո՛չ սիկ մի խաչ կամ Ավետարան տերունական սեղանի վերայ. եկեղեցի կոչող այդ կիսաւեր ողորմելի շէքերը ըստ մեծի մասին մերկ են բոլորովին» [1, ց. 2, գ. 167, թ. 74 և շրջ.; 9, էջ 181-182]: Թեմակալ առաջնորդը նշում է, որ Ղարաղաղ կատարած իր այցելության ժամանակ ծխական և գործակալական ժողովներում որոշվել է բացել դպրոցներ Ղարաղաղի 3 գյուղերում (Սըղըն, Դրգեոյգար և Բերդին-ետքը), իսկ հարակից մնացյալ բնակավայրերի հայ բնակչությունը երեխաներին կրերեր այդ դպրոցները [7, 1911, №156, էջ 2]: Մակայն այդ որոշումը ևս չի իրագործվել:

### **Արդաբիլ և Մուժամբար**

Ատրպատականի թեմում առանձին գործակալությունների կարգավիճակ ունեցող Արդաբիլ քաղաքի և Մուժամբար գյուղի վերաբերմամբ թեմակալ առաջնորդը նշում է, որ Արդաբիլ քաղաքի հայ բնակչությունը, չունենալով նյութական ապահովություն և մշտական ֆինանսական միջոցներ, տասնյակ տարիներ է կարողանում է պահպանել քաղաքի Հայ եկեղեցին և դպրոցը [7, 1911, №161, էջ 1]: Իսկ Մուժամբար գյուղի մասին թեմակալ առաջնորդը նշում է, որ չնայած տարիներ առաջ գյուղի կրած մեծ կորուստներին [2, վավ. 220; 9, էջ 143] գյուղը իր սուղ միջոցներով անգամ պահպանում է գյուղի դպրոցը [7, 1911, №161, էջ 1]: Իսկ սբ. Ստ. Նախավկայի վանքի վերաբերյալ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը գրում է, որ վանքապատկան հողերի սեփականության իրավունքի վերականգնումից հետո հույս ունի, որ կկարողանան վանքի տնտեսական դրությունը լավարկել, ինչի շնորհիվ էլ վանքում կբացվի դպրոց հարակից Դարաշամբ գյուղի հայ բնակչության համար [7, 1911, №161, էջ 2]:

Ատրպատականի ծայրագավառներ կատարած վերոհիշյալ այցելությունից հետո թեմակալ առաջնորդը լծվում է թեմական ժողով հրավիրելու գործին, որը պետք է ի վերջո ձևավորեր կայուն, մշտապես գործող թեմական խորհուրդ:

Վերջինիս առաջին գործը պետք է լիներ դեռևս 1901 թ. հաստատված թեմական կանոնադրության վերանայումը, ինչի միջոցով պետք է մեկնարկեր թեմում առկա մնացած գործերի ընթացքը: Այս գործերից կարևորագույնը թեմակալը համարում էր դպրոցական գործի կարգավորումը [1, ց. 2, գ. 1867, թթ. 187ըջ.-19; 9, էջ 179-180]: Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ իր շրջագայության ընթացքում բոլոր բնակավայրերում փորձել է արմատավորել այն համոզմունքը, որ շրջանների ծխական դպրոցները անպայմանորեն պետք է կապ ունենան առաջնորդարանի հետ, պետք է հաստատվի ընդհանուր ծրագիր և կանոնադրություն [1, ց. 2, գ. 1867, թ. 192ըջ.; 9, էջ 180]: Այս առնչությամբ թեմակալը նշում է. «Այս թեմում ցարդ ոչ մի դպրոցական վարչություն չի եղել, այլ մասնատր ընկերություններ, հասարակություններ ու անհատներ դպրոցներ բանալով՝ կառավարել են ըստ հանդից» [7, 1911, №161, էջ 2]:

### Եզրակացություն

Ընդհանրացնելով ասելիքը՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ «Ատրպատականի, մասնատրապետ մի քանի գաւառների՝ հայերի խաղաղ առաջադիմութեան գլխատր արգելքը երկրում տիրող անապահովությունն է» [7, 1911, №161, էջ 2]: Եվ եթե նախկինում առաջադիմության ու զարգացման հիմնական պատճենը հանդիսանում էին կալվածատեր խաներն իրենց կամայական կառավարմամբ, բնակչությանը մշտական վախի մեջ պահելով և հարստահարություններով, ապա վերջին տարիներին այս ամենին գումարվել էր ողջ երկրում քաղաքական անկայությունը, ինչը, բնականաբար, իր բացասական հետևանքներն էր ունենալու երկրի ծայրագավառներում: Անդրադառնալով երկրում կայունության հաստատմանը՝ թեմակալ առաջնորդը նշում է, որ Պարսկաստանի ժողովուրդը խաղաղասեր է և հեշտությամբ է ենթարկվում, անհրաժեշտ ուժի առկայության պարագայում առանց մեծ ջանքեր գործադրելու հնարավոր է հասնել ողջ Պարսկաստանում սպասված խաղաղության և կայունության, ինչն էլ կրեթի տնտեսական, կրթական, հասարակական ոլորտներում կայունության և զարգացման [7, 1911, №161, էջ 2]:

Այնուհետ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը մատնանշում է Ատրպատականի հայաբնակ շրջանների կտրված, ցրված դիրքը աշխարհագրական տեսանկյունից և այս հանգամանքով պայմանավորված՝ հաղորդակցության արգելքները: Թեմակալի բնորոշմամբ՝ «Ատրպատականի թեմում չր կայ դպրոցների մի ընդհանուր ղեկավարություն, ընդհանուր ուղղություն և ծրագրեր» [7, 1911, №162, էջ 1]: Բնավ չհերքելով Ատրպատականի նախկին թեմակալների և թեմական խորհուրդների կողմից այս

հարցին կատարած անդրադարձը՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ որոշակի դեպքերում նկատվող գրավոր հարաբերություններից անդին չի գործել մշտական, դպրոցների և առաջնորդարանի միջև երկխոսությունն ու քննարկումները ապահովող կապ, որը կնպաստեր նաև միասնական կրթական ծրագրի ներդրմանն ու կրթական համակարգում նորամուծությունների կիրառմանը [7, 1911, №162, էջ 1]: Այստեղ հիշատակության են արժանի նաև մասնավոր անձանց, ընկերությունների միջոցներով բացված և գոյատևող դպրոցները, որոնք իրենց գործունեության վերաբերյալ հաշվետու չեն եղել առաջնորդարանին: Վերջիններս, սովորաբար, չեն ունեցել ընդհանուր կրթական մոդել մնացյալ գործող դպրոցների հետ և փաստացի նրանց միջև կապը խզված է եղել, ինչն էլ անհնարին է դարձրել վերջիններիս կողմից մատուցած կրթության որակի վերահսկողությունը առաջնորդարանի կամ թեմական խորհրդի կողմից [7, 1911, №162, էջ 1]:

Չհերքելով առաջնորդարանի թերացումներն այս հարցում՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ «Թեմական կանոնադրություն հաստատվելուց յետոյ կենտրոնացում և ընդհանուր ղեկավարություն ըստ ինքեան պիտի առաջ ցար. բայց ուրիշ կետերի հետ այս ևս շատ սահմանափակ չափով է գործադրվել» [7, 1911, №162, էջ 1]: Թեմակալ առաջնորդի վկայությամբ իր թեմակալության ընթացքում այս ուղղությամբ բավականաչափ աշխատանքներ են իրականացվել. քննարկվել է թեմական ժողովի կողմից ընդհանուր ուսումնական խորհուրդ հաստատելու, դրա հետ մեկտեղ ընդհանուր ծրագիր և կանոնադրություն կազմելու քայլերը: Արդարացիորեն Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նշում է, որ Ատրպատականի առաջնորդարանը առայժմ հնարավորություն չունի կանոնավոր հսկողություն սահմանելու թեմում դպրոցների բացման, արդեն իսկ գործող դպրոցների վերահսկման և զարգացման համար [7, 1911, №162, էջ 1]: Նշում է, որ վերջին երկու տարիներին դպրոցներից ստացվում են հաշիվներ, տեղեկագրեր, սակայն երկրի ներքին անկայունության պայմաններում առավել ևս կան շատ գավառներ, որտեղ գործակալներ կամ գործակալական խորհուրդներ չկան, որոնց միջոցով գոնե Ատրպատականի առաջնորդարանը կկարողանար կանոնավոր մասնակցություն ունենալ տեղի դպրոցների ղեկավարմանը [7, 1911, №162, էջ 1]:

Բացի այդ, թեմում կրթական գործի բարելավման համար Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը նկատում է թեմական տեսչի պաշտոնի անհրաժեշտությունը, ով կբրադվեր բացառապես թեմում կրթական գործի վերահսկողությամբ և կկատարեր կանոնավոր այցեր

թեմի ենթակայության տակ գտնվող գավառներ: Այստեղ էլ թեմակալը ևս մեկ անգամ հիշատակում է թեմի աղքատիկ բյուջեի պատճառով նման պաշտոնի առկայության անհնարինությունը [7, 1911, №162, էջ 1]:

Խոսելով հատկապես գավառներում կրթական գործին նվիրյալ, տոկուն և աշխատասեր մարդկանց անհրաժեշտությունից [3, վավ. 179, թ. 16] տեղում կրթական գործին զարկ տալու և որ գլխավորն է՝ կրթական գործի կանոնավորությունն ապահովելու համար՝ թեմակալ առաջնորդն անդրադառնում է քննարկվող ժամանակաշրջանում կարևոր և բարդ լուծելի, Ատրպատականում կրթական գործի զարգացման համար անասելի անհրաժեշտություն համարվող նյութական միջոցների հայթայթման խնդրին: Արդարացիորեն մատնացույց անելով Ատրպատականում ժողովրդի աղքատ դրությունը, կավածատերերի, առևտրականների և արհեստավորների գրեթե սնանկ իրավիճակը, երկրում ժողովրդի ոչ բարեկեցիկ կյանքը՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը հստակեցնում է, որ Ատրպատականի դրությունն ընդհանրապես և կրթական առաջընթացի ապահովումը մասնավորապես առանց արտաքին աջակցության անհնար է իրականացնել: Առաջին հերթին թեմակալ առաջնորդը հիշատակում է պարսկահայ պանդուխտներին և Պարսկաստանից շատ տարիներ առաջ վերստին գաղթած և այլ երկրներում որոշակի հաջողություններ գրանցած պարսկահայերին: Վերջինիս բնորոշմամբ ցանկության դեպքում կարելի էր մեկ կամ մի քանի միություններ ձևավորել, որոնք, վերահսկվելով հենց նվիրատուների կողմից, կիրականացնեին հանգանակված գումարների ճիշտ տեղաբաշխումն ու արդյունավետ օգտագործումը [3, վավ. 179, թ. 16]: Միաժամանակ թեմակալ առաջնորդը նշում է, որ սկզբունքորեն անհրաժեշտ է արտաքին օգնությունը Ատրպատականում կրթական գործին զարկ տալու համար, սակայն շատ սխալ է ամբողջապես այն դնել արտաքին հովանավորչության վրա՝ բացառելով կամ անտեսելով տեղի ներուժը [3, վավ. 179, թ. 16; 7, 1911, №162, էջ 2]: Վերջինս վստահեցնում է, որ միայն ճիշտ մոտեցման և ժամանակատար աշխատանքի շնորհիվ կարելի է Ատրպատականի հայաբնակ գավառների գյուղացիներին ոչ միայն բացատրել կրթության, դպրոցի կարևորությունը, այլև վերջիններիս մեջ սերմանել սեփական ուժերով իրենց իսկ զարգացմանը նպաստելու գաղափարը և այն դարձնել գաղափարից գործողություն [3, վավ. 179, թ. 16; 7, 1911, №162, էջ 2]:

Արխիվային փաստաթղթերի և ժամանակի մամուլի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս փաստել, որ աստվածաբանական կրթություն ստացած Կարապետ եպիսկոպոս Տեր-

Մկրտչյանն իր թեմակալության շրջանում (1907-1912 թթ.) Պարսկաստանի քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմաններում անգամ փորձում է հնարավորինս գործնական քայլեր կատարել թեմում կրթական գործի կանոնակարգման և զարգացման ուղղությամբ:

Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, ելնելով իր Ատրպատականի գավառներ կատարած այցելությունից [1, ց. 2, գ. 1867, թթ. 10-11; 3, վավ. 179, թ. 4; 2, վավ. 226, թ. 4; 9, էջ 172-173; 7, 1910, №107, էջ 4; 7, 1910, №186, էջ 4; 7, 1910, №191, էջ 3-4; 7, 1910, №195, էջ 3-4], նշում է, որ հատկապես գյուղական համայնքներում դպրոցների մահամերձ վիճակում գտնվելու առաջնային պայմաններից մեկն առանց այդ էլ աղքատ, մշտական դրամական միջոցներ չունեցող գյուղացուց երեխայի դպրոցական վճարը նախապես կամ առանձին վերցնելն է [7, 1910, №135, էջ 2-3]: Ինչպես արդեն իսկ նշեցինք, այս իրողության հետևանքն է այն, որ շատ գյուղացիներ իրենց երեխաներին չեն ուղարկում դպրոց կամ ուղարկում են միսիոներական դպրոցներ: Որպես լուծում Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանն առաջարկում է գյուղացուց զանձվող դպրոցական ծախսը ներառել գյուղի ընդհանուր տուրքի մեջ: Այդպես գյուղացին կուղարկեր իր երեխային դպրոց, բաց չէր թողնի կրթական գործընթացը թեկուզև իր արդեն իսկ վճարած գումարը չկորցնելու համար [7, 1911, №162, էջ 2]: Եվ առհասարակ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը գտնում էր, որ անհրաժեշտ է տարատեսակ մեթոդներով հատկապես գյուղացիներին կապել դպրոցի հետ, առաջացնել հետաքրքրվածություն գյուղում դպրոցի և կրթական կյանքի շուրջ: Թեմակալի բնորոշմամբ, շատ էին դեպքերը, երբ արտաքին նվիրատվությամբ գյուղում պահվող դպրոցների նկատմամբ գյուղացիները սովորաբար դրսևորում էին կանխակալ վերաբերմունք, դպրոցը դիտարկում էին իրենց համար անհայտ նպատակի ծառայող կառույց, հետևաբար դրսևորում էին անտարբեր, իսկ որոշ դեպքերում թշնամական վերաբերմունք [7, 1911, №162, էջ 2]: Իբրև հարցի լուծման տարբերակ՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանն առաջարկում էր թեկուզ բոլորովին տգետ, բայց այդ գյուղի բնակիչներից մեկին կամ մի քանիսին ներառել դպրոցի հոգաբարձուների խորհրդի աշխատանքներին՝ վերջիններիս մասնակից դարձնելով դպրոցի ղեկավարման աշխատանքներին: Այդ պարագայում հնարավոր կլինե՞ր ընդհանուր հետաքրքրվածություն առաջացնել դպրոցի և կրթական գործի նկատմամբ և այդպիսով վերջիններս թեկուզ իրենց կամքից անկախ, բայց կնպաստեին դպրոցի զարգացմանը: Իսկ եթե չնպաստեին, զոնե թե չէին խանգարի [7, 1911, №162, էջ 2]: Գյուղական դպրոցների նյութական

ապահովման տեսանկյունից Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը արդյունավետ մեթոդ է համարում դպրոցի անունով խանութի առկայությունը գյուղում, որի ամբողջ եկամուտը կամ եկամտի որոշակի տոկոսը կհատկացվեր դպրոցին [7, 1911, №162, էջ 2]: Այնուամենայնիվ, կարևորելով տեղական նյութական միջոցների առկայությունը գավառներում և գյուղերում դպրոցների զարգացման և կրթական գործի բարելավման գործում՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը հստակեցնում է, որ առանց արտաքին նյութական շարունակական աջակցության հնարավոր չէ ապահովել Ատրպատականում կրթական գործի զարգացումը:

Գավառներում դպրոցների կանոնավոր ցանցի առկայությունը Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը դիտարկում էր շատ կարևոր միջոց երկրում հասարակական և առավելապես քաղաքական կառավարման տեսակետից. «Փոքր ի շատէ կրթութիւն ունեցող մարդկանց, ուսուցիչների ներկայութիւնը գաստում միջոց կր տար կենտրոնի հետ աւելի սերտ կապ պահ պանելու, հասարակական չարիքների դէմ կռելու, հարստահարիչների դէմ հոգևոր զէնքով մաքառելու և բողոքը տեղ հասցնելու» [7, 1911, №162, էջ 2]:

Եվ ի վերջո, Ատրպատականի հայոց թեմում ազգային կրթական կենտրոնների, այն է՝ հայկական դպրոցների կանոնավոր գործունեությունը, վերջիններիս կողմից մատուցած կրթական ծառայության շարունակական լավարկումն ու ժամանակի պահանջներին և հայ ազգաբնակչության լավագույն շահին միտված համապատասխանեցումը, այս գործընթացի վերահսկողության իրականացումը առաջնորդարանի կողմից տվյալ ժամանակաշրջանում Ատրպատականի ողջ նահանգում օրեցօր ահագնացող միսիոներական շարժումների դեմ պայքարելու, քրիստոնեական այլ հարանվանությունների հետ ինչու ոչ նաև հարկադրված մրցակցության, հայ բնակչությանը միսիոներ-

ների ազդեցությունից ազատելու և վերջնարդյունքում Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ հայ ազգաբնակչությանը ուժացումից փրկելու լավագույն տարբերակն էր քննարկվող ժամանակաշրջանում:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 57:
2. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ - «Մատենադարան» (Մատենադարան), Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95:
3. Մատենադարան, Կարապետ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 100:
4. **Աճեմեան Հայկ.** Պատմություն Արամեան Ազգային դպրոցի, Թավրիզ, Հարիւրամեայ Յորելեանի առթիւ՝ 1835-1935: – Թավրիզ, Ատրպատականի Հայոց թեմական տպարան, 1936:
5. **Կարապետ ծայրագոյն վարդապետ Տեր-Մկրտչյան,** Հայ Եկեղեցու պատմություն: Մասն Ա: – Ս. Էջմիածին, 2011, էջ 5-6:
6. **Մամեան Ն.,** Ատրպատականի հայոց թեմը, «Բաֆֆի» տարեգիրք, Ա տարի, 1969: – Թեհրան, տպ. «Մողերն», 1968:
7. «Մշակ» հասարակական-քաղաքական, գրական թերթ: Թիֆլիս, 1872-1921:
8. Պատմություն Ատրպատականի Հայոց թեմական դպրոցի՝ 1909-1936: – Թեհրան, «Ալիք» տպարան, 1981:
9. Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Գիրք ԺԶ, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտիչեան (1866-1915): – Երեւան, Հայաստանի ազգային արխիվ, 2006. – 574 էջ:

Содана / Հանձնվել է՝ 07.02.2026

Рецензирована / Գրախոսվել է՝ 13.02.2026

Принята / Ընդունվել է՝ 18.02.2026